ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# 2016

# ՏԱՐԵԿԱՆ
## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԿԵՆՏՐՈՆ
## ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

***Հարգելի՛ համաքաղաքացիներ,***

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

**Երևանի քաղաքապետ՝**
**ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

---

**Կենտրոն վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,**

ամփոփելով 2016 թվականը, ի մի բերելով վարչական շրջանում արձանագրած ձեռքբերումներն ու վերլուծելով աշխատանքային գործունեության ողջ ընթացքը՝ ուրախությամբ և գոհունակությամբ պետք է արձանագրենք, որ այս տարին ևս հագեցած էր դրական նախաձեռնություններով ու գործերով՝ բազմոլորտ աշխատանքներ, բնակիչների հետ բազմաթիվ հանդիպումներ, ստեղծված ու պահպանված փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ: Բակ առ բակ, փողոց առ փողոց մենք ծանոթացել ենք մեր բնակիչների մտահոգություններին և հոգսերին: Ձեզ հետ միասին կարողացել ենք իրականացնել լայնածավալ ծրագրեր, որոնց շնորհիվ Կենտրոն վարչական շրջանի մի շարք փողոցներ, բակային տարածքներ դարձել են առավել հարմարավետ ու ներկայանալի: Հավատարիմ մնալով մեր որդեգրած սկզբունքներին՝ մենք շարունակելու ենք նույն ոգով ու եռանդով, նվիրվածությամբ և նոր լիցքերով կյանքի կոչել նորանոր ծրագրեր՝ ի բարօրություն Կենտրոն վարչական շրջանի յուրաքանչյուր բնակչի:

**Կենտրոն վարչական շրջանի ղեկավար՝**
**Արա Սադոյան**

## *Տարվա ձեռքբերումները. առանցքային ծրագրերի մեկնարկը տրված է*

***2016 թ. Կենտրոն վարչական շրջանում մեկնարկել են Գլխավոր պողոտայի «Վերնիսաժի» տարածքի վերակառուցման, արդիականացման, կանոնակարգման ու բարեկարգման ծրագրով նախատեսված աշխատանքները:***

***Առաջին փուլի վերակառուցման ծրագրի արդյունքում բարեկարգված հատվածում տնտեսվարողների գործունեության համար ստեղծվել են առևտուր իրականացնելու համար քաղաքակիրթ ու հարմարավետ պայմաններ:***



Վարչական շրջանում ասֆալտապատվել են շուրջ **54.800 մ²** ընդհանուր մակերեսով փողոցներ, մայթեր և բակային տարածքներ:

Կառուցվել և շահագործման է հանձնվել Հյուսիսային պողոտայի ստորգետնյա անցումը: Տարածքը միաժամանակ վերածվել է առևտրի և ժամանցի ժամանակակակից կենտրոնի: Այն ամբողջությամբ ապահովվել է ջեռուցման, հովացման, օդափոխության և անհրաժեշտ բոլոր այլ համակարգերով: Կահավորվել է հատուկ վերելակով և շարժասանդուղքներով:

Սալիկապատվել է **1 535 մ²** ընդհանուր մակերեսով տարածք, նորոգվել և տեղադրվել են **662 գծմ** եզրաքարեր:
Զուգահեռաբար նորերով են փոխարինվել վնասված կամ կոտրված ու հետագա շահագործման համար ոչ պիտանի դարձած սալիկները: Հիմնանորգվել, վերանորոգվել և կառուցվել են **450 մ²** մակերեսով հենապատեր:

Բոլոր նորոգվող և հիմնանորոգվող փողոցներում, ինչպես նաև հանրային նշանակության շենքերի մուտքերում կառուցվել է **40** թեքահարթակ:

Վարչական շրջանում ստեղծվել են **9 350 մ²** ընդհանուր մակերեսով նոր կանաչ տարածքներ:

Տնկվել է **4 550 ծառ**, շուրջ **136 420** ծաղկասածիլ, **43 025** կակաչի սոխուկ և թուփ: Իրականացվել է ավելի քան **5 400** ծառի սանիտարական էտ:

Վերանորոգվել է **4 035 գծմ** երկարությամբ ոռոգման ցանց, փոխարինվել են փականները, ներկվել են խողովակները:

Վերանորոգվել են **16.450 մ²** ընդհանուր մակերեսով հարթ և

**8 860 մ²** ընդհանուր մակերեսով թեք տանիքներ:

Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում վերանորոգվել է **132** շքամուտք, աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում:

**407** շենքերում նորոգվել է **430** վերելակ: Տեղադրվել է մուտքի, նկուղի և աղբախցիկի **81** դուռ:

Ապակեպատվել է **840** մ² դուռ և պատուհան:

Իրականացվել են **4 100 գծմ** ջրթափ խողովակների նորոգման աշխատանքներ:

Ջերմամեկուսացվել է **1 560 գծմ** խողովակ: Նորոգվել և ամրացվել է **13** վթարային պատշգամբ:

Վարչական շրջանը համալրվել է բարեկարգ բակերով. կառուցվել, բարեկարգվել և կահավորվել է **42** բակային տարածք, այդ թվում՝ **15** խաղահրապարակ, որտեղ տեղադրվել են **11** մանկական և **7** սպորտային խաղեր:

Նկարազարդման աշխատանքներ են իրականացվել **29** բակերում:

Դեմիրճյան **29** բակում կառուցվել և շահագործման է հանձնվել արհեստական խոտածածկով մինի ֆուտբոլի խաղադաշտը: Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել նախորդ տարիներին կառուցված մինի ֆուտբոլի դաշտերում:

# ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Նոր, բարեկարգ, հարմարավետ, կանաչապատ բակ է բացվել Աբովյան **28,30,32** հասցեում: Վերանորոգվել և թարմացվել են նախկինում տեղադրված նստարաններն ու աղբամանները, տեղադրվել են նորերը, վերանորոգվել և գունազարդվել են կամարանցումները, նկարազարդվել են բակային տարածքները:

Բազմաբնակարան շենքերում իրականացվել են շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի **14 200 գծմ** վերանորոգման աշխատանքներ, նորերով են փոխարինվել ջրատար համակարգի հանգույցները, փականները, կարգավորիչները և խողովակները: Վերանորոգվել է **1 700 գծմ** ընդհանուր երկարությամբ կոյուղագիծ:

**4 615 գծմ** արտաքին լուսավորության նոր ցանց է անցկացվել բակերում և փողոցներում:

Բազմաբնակարան շենքերի շքամուտքերում նորոգվել է **40 500 գծմ** էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգ:

Բակերում և փողոցներում տեղադրվել է **85** հենասյուն:

## Հոգատար և պատասխանատու

Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Մեծն Ներսես» ԲՀԿ-ի, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի, Գերմանական կարմիր խաչի, «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության, ինչպես նաև անհատ բարերարների հետ:

Համագործակցության արդյունքում նյութական և պարենային օգնություն է տրամադրվել վարչական շրջանի **2 927** սոցիալապես անապահով ընտանիքների:

ՀՀ և Արցախի սահմանամերձ զորամասերում ծառայող իրենց զավակներին տեսակցելու հնարավորություն են ստացել կենտրոնաբնակ **78** ժամկետային զինծառայողների **96** ծնողներ: **120** նորակոչիկների ՀՀ Բանակի օրվա կապակցությամբ հանձնվել են նվերների փաթեթներ:

Հայրենական և Արցախյան պատերազմի մասնակիցներին, «Մանկավարժ վետերանների ակումբին», խիստ կարիքավոր հաշմանդամներին, տարեցներին, ինչպես նաև զոհված ազատամարտիկների կանանց տոների և հիշարժան տարելիցների կապակցությամբ ցուցաբերվել է նյութական և դրամական աջակցություն:

Ամանորյա տոների կապակցությամբ շուրջ **4 450** ընտանիքի տրամադրվել են սննդամթերքի փաթեթներ, **3 600** երեխայի հատկացվել են կոնֆետների փաթեթներ: Սիրիահայ **182** ընտանիք ստացել է նյութական, պարենային և դրամական աջակցություն:

Դրամական օգնություն է ցուցաբերվել **853** ընտանիքի: Սգո արարողությունների կազմակերպման համար աջակցություն է ստացել **45** ընտանիք:

«Էրեբունի-Երևան **2798**» տոնակատարությունների շրջանակներում սոցիալապես անապահով տարբեր խմբերի **286** ընտանիքների որպես աջակցություն՝ տրամադրվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

**101** շահառու օգտվել է բարեգործական ճաշարանից:

Առողջարանային ուղեգիր է տրամադրվել **36** բնակչի: Պետպատվերի շրջանակում բուժման ուղեգիր է ստացել **32** քաղաքացի:

«Նատալի ֆարմ» ընկերության հետ համագործակցության արդյունքում **113** սոցիալապես անապահով բնակիչներ ստացել են դեղորայք ձեռք բերելու քարտեր:



Ուսումնական տարվան ընդառաջ վարչական շրջանի ենթակայության մանկապարտեզների ավարտական խմբերի, ինչպես նաև սոցիալապես առավել կարիքավոր ընտանիքների 1-4 դասարանների երեխաների տրամադրվել են **1 706** պայուսակներ և գրենական պիտույքներ:

Վարչական շրջանի թվով 20 մանկապարտեզների շուրջ **500** սաներ «Տարվա եղանակներ» խորագրով միջոցառմանը գեղարվեստական բեմադրություններով ներկայացրել են տարվա 4 եղանակները՝ համեմված հայկական տոնացույցի ծեսերով:

Նորոգման աշխատանքներ են իրականացվել № **1**, № **3**, № **17** մանկապարտեզներում: Նոր գույքով համալրելու ծրագրով թվով 21 մանկապարտեզների տրամադրվել է 38 երկհարկանի և 9 եռահարկ մահճակալ, 33 մանկական զգեստապահարան, 7 սառնարան, 91 մանկական սեղան և 474 մանկական աթոռ:

Վարչական շրջանում գործող մանկապարտազներ անվճար հիմունքով հաճախել է **2 948** երեխա:

Բոլոր **21** մանկապարտեզներն ամբողջությամբ ջեռուցվում են:Կազմակերպվել են տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր, մրցույթներ, ինչպես նաև միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին:

Կազմակերպվել է կենտրոնաբնակ շուրջ **100** երեխաների հանգիստը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Վարչական շրջանում կազմակերպվել են համերգներ, ցուցահանդեսներ, վիկտորինաներ, հանդիպումներ, ինչպես նաև ազգային տոներին, հայ և համաշխարհային դասականներին նվիրված տարաբնույթ միջոցառումներ:

Վարչական շրջանի արվեստի դպրոցներ և «Մանկապատանեկան ստեղծագործության և դաստիարակության գեղագիտական կենտրոն» է հաճախել շուրջ **900** աշակերտ:

«Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է **22** բակային ճամբար:

- 2016 թ. հիմնանորոգվել և շահագործման է հանձնվել Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցը:
- 2016 թ. Հանրապետության փողոցին հարակից պուրակում բացվել է պետական և ռազմական գործիչ, ազգային գաղափարախոս Գարեգին Նժդեհի արձանը: Արձանի քանդակագործն է Գագիկ Ստեփանյանը, ճարտարապետը՝ Ասլան Մխիթարյանը:

Վարչական շրջանի թվով 10 մանկապարտեզների ավագ խմբերի շուրջ **100** սաներ մասնակցել են «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» ամենամյա սպորտլանդիային:

***Վարչական շրջանում կազմակերպվել և իրականացվել են.***
Անկախության **25**-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների սպարտակիադիա, վարչական շրջանի «Փոխանցիկ գավաթի» առաջնություն, «Արա մեզ հետ, արա մեզ նման, արա մեզանից լավ» մարզական փառատոն, հանրակրթական դպրոցների աշակերտների միջև «Սկսնակ շախմատիստների» առաջնություն, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզահամերգային տոնահանդես, վարչական շրջանի վետերան շախմատիստների առաջնություն:

***Վարչական շրջանի թիմերը մասնակցել են.***
ՀՀ Անկախության **25**-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային **25**-րդ մարզական խաղերին, ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկությանը, «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» փառատոնին, նախազորակոչային, զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերին և զբաղեցրել մրցանակային տեղեր:

2016թ. վարչական շրջանում՝ «Հրազդան» մարզադաշտի հարևանությամբ, բացվել է Խորհրդային Միության չեմպիոն և գավաթակիր «Արարատ - 73» ֆուտբոլային թիմի արձանախումբը:

Երևանի Կենտրոն մանկապատանեկան համալիր մարզադպրոց և Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց է հաճախել **481** երեխա:

Կենտրոն վարչական շրջանում գործող շախմատի դպրոց անվճար հիմունքով հաճախել է **256** երեխա:

Վարչական շրջանի և ԼՂՀ Ասկերանի վարչակազմի միջև վավերացված հուշագրով վարչական շրջանից պարբերաբար կազմակերպվել են այցեր Ասկերան, իրականացվել են կրթական, մշակութային, սոցիալական ծրագրեր և մի շարք մասնագիտական փոխայցեր, ինչի արդյունքում համագործակցության կապերն էլ ավելի են ամրապնդվել:



Ասկերան կատարած այցի շրջանակում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակությունն այցելել է տեղի զորամասեր և հանձնել նվերներ:

Վարչական շրջանը հյուրընկալել է «Էրեբունի-Երևան **2798**» տոնակատարության շրջանակներում անցկացվող միջոցառումներին մասնակցելու նպատակով Երևան ժամանած ՌԴ Մոսկվայի կառավարության նախարարին և այլ հյուրերի: ՀՀ Կոտայքի մարզի հետ հաստատված համագործակցության արդյունքում կազմակերպվել են փոխայցեր, որոնց արդյունքում իրականացվել են տարաբնույթ մշակութային և սոցիալական ծրագրեր:



2016թ. նոյեմբերի 9-ին Մոսկվա և Երևան քաղաքների Կենտրոն վարչական շրջանների միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ վարչական շրջանների ղեկավարների և պատվիրակների մասնակցությամբ: Վարչական շրջանների միջև բազմակողմ համագործակցության նպատակով վավերացված հուշագրով կկազմակերպվեն կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներ և տարատեսակ ծրագրեր:

2014
ԿԵՆՏՐՈՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝
+(374 11) 518-488
kentron@yerevan.am

www.yerevan.am